

17.

գալին պատմութիւն: Ընդհանուր աշխարհագրութիւն:

Պարսկերէն

Այլ գերագոյն ուսանելիք ըստ լեզուի նոցա. և թարգմանութիւն ի պարսից ի հայ, և ի հայոց ի պարս լեզու:

Ս. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐ

Գիտնական բարեկամի իւրում Հօր Եփրեմայ Ասպետ վարդապետի

Ի Ս. Նազարեանց խնդա՛լ:

Ձհարազատիդ ընկալեալ զնամակ գեղեցկաբան՝ որում ի վաղուց հետէ ապաժոյժ սպասէի, այո ոչ առանց բաղցր համոզանաց սրտի ընթերցայ զայն, տեղեկացեալ ամենայն պառնասաց՝ որոց եղև խափանարկուն ձեզ լինել ի պատասխանատուութիւն իմոյս թղթոյ: Յաւէ ապաքէն հայրենասէր մերոյս սրտի տեղեկանալ առ ի ձէնջ՝ թէ Հայազինք մեր յառաջն յօժարամիտ առ օգտակարս, իսկ ի վերջն դանդաղ և սառն՝ սակաւ ինչ ի լաւագունիցն յառաջ տանեն. խոստովանիմ պարզամիտ՝ եթէ այդ արատ՝ վրդովեցուցիչ բարեսիրացն սրտի՝ է մի ի ժառանգականացն Հայոց. զայդմանսիրութենէ իմաստութեան առ նախնիս մեր՝ իշխանս և թագաւորս՝ բանս բամբասանաց բազումս առնէ արդէն բերթողահայրն մեր Մովսէս Խորենացի (գիրք ա. գլ. 8): Մի միայն ծաղիկ և պարծանք հայկականս անուան՝ Հարբ և վարդապետք եկեղեցւոյ՝ զորոց ականաւոր արգասեաց ի դպրութեանս մասին կարէք ընթեռնուլ և յիմուլմս համառօտ տեսութեան Հայոց դպրութեան ցդարն երեքտասաներորդ՝ շարագրելոյ ի Ռուս լեզու՝ որոյ օրինակք երեք այո և հինգք և վեցք և եօթն են առ ձեզ ի Պետերբուրգ: Մեծամեծ նպատակք կան առաջի աչաց իմոց. այլ ամսո՞ս՝ զի այսմ

ամենայնի ոչինչ համեմատին թուլամորթ և սառնասիրտ բարբ
մերայնոց. յաւել առ յայս և զիմոյ վիճակի չքաւորութիւն
ի տարանջատ վայրս աշխարհի Բաջայայա է ձեզ՝ թէ առ ի
տպել զիոբրիկ պատմաբանական երկասիրութիւն իմ ի Հայ
լեզու, կարևորին ի Ղազան 600 ուռբլի, այն է մի միայն
ծախք վասն մշակաց, թղթոյ և տպագրութեան. ուրեմն հա-
ւաքեալքն ձեր ցայժմ 455 ուռբլի (130 արծաթ) ոչ հե-
րիքասցին. բայց մտադրեալ է իմ պոսպէս ընթանալ. ի
ստանալս ի ձէնք զժողովեալն 130 ո. արծ. մատեայց աղա-
չական նամակաւ առ Լազար, Իվան Եակիմիչս եւ առ պա-
րոն Դիլանովն զի առանձինն զոհեցեն ի պսակ կատարման
ազգագրուս գործոյս հարիւր հարիւր կամ աւելի ևս ուռբ-
լիս ընդ այր. և յայնժամ անյապաղ ձեռն ի գործ արկեալ
յառաջ տարայց զիրն. Ուրախ եմ՝ զի մտադրեալ էք եւ
խոստանայք առաքել ինձ զդրաման ի վախճան ամիս. և մաղ-
թեմ յԱստուծոյ՝ զի և միայս նոր տարի յերկարաձգեսցի ցը
միւսն առանց իրիք կատարման խոստմանդ. Մասն բարեկա-
մական ձերոց բարեհալցութեանց առ ծնունդ որդեկի իմոյ
ընկալարուք զերկդիմի մեր շնորհակալիս առ ի սրտէ և ի
հոգւոյ, նոյն և վասն պիտանի լրոցդ ի մասին վեհափառ Ե-
պիսկոպոսապետին մերոյ Ներսիսի Ծիծաղելի ըստ չափ թուե-
ցաւ ինձ եղանակ ի չքմեղս կացուցանելոյ զանձինս Տեարց
Լազարեանց վասն սառնասիրտն նոցայն լինելոյ առ իս. ո՞ր
էին պատուական ազգասէրքդ, մինչ նախարարն ազգային լու-
սաւորութեան ի տարակուսի էր՝ թէ ուր տացէ ինձ պաշ-
տօն, իսկ ես ի մեծի անյուսութեան բռնազբօսեալ գտանէի
մատնցոյց լինել տէրութեան ի բարբարոս վայրս Ղազանու.
ուր և եկի և կամ՝ արդէն ի տառապանս բազումս. Մար-
գարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի. առ իւրս եկն
և իւրքն զնա ոչ ընկալան. ահաւասիկ է բանալի իրին.
Ջհասատաիլ երից ասիական աթոռոց ի համալսարանիդ Պե-
տերբուրքայ՝ որոց մի է և հայկականն, գիտեմ եւ ընթեր-
ցեալ է իմ ի լուրս Սիւնհոդոսին Ռուսաց. բայց զի՛նչ. այ-
դոբիկ աթոռք ստորակարգ ինձ տեսանին՝ թէպէտ թոշակն
500 ուռբլեօք գերազանցէ քան զիմն այժմեան. Տէրութիւնն
վասն ընդարձակելոյ զուսումն արեւելեան լեզուաց՝ կամի
կարգել այդր եւ եւս քանի մի հասարակ վարժապետս (լէբ-

տօրս ասացեալ) վասն արեւելեան լեզուաց՝ առանց այնց արտօնութեանց՝ յորս եսն վայելեմ՝ թէպէտ փոքր մի սակաւ թողակաւ, այն է, 2800. զորոյ հակառակն Պետերբուրքեան ասիական վարժապետքդ ստացին 2800: Են իմ արդէն նամակք ի Պետերբուրքեան համալսարանէ եւ ի Պարոն Դիւլանովայ եւ յայսմ մասին. բայց դեռ ուս մեան տարակուսելիք բազումք, մինչեւ մարթացայց վճռաբար փոյթ տանիլ այդմ. մի զի ոչ հաճեցայց ի բարձրագոյն տեղւոյն խոնարհիլ ի ստորնագոյն. երկրորդ առ այդ հարկաւորի նոյնպէս համաձայնութիւն նախարարին լուսաւորութեան Ռուսաստանեայց, այն է միեւնոյն աստիճանաւ տեղափոխիլ ի Ղազանէ ի Պետերբուրք. եւ այլ նմանիք: Իդձ իմ մեծ էր լինել առ ձեզ պաշտօնաւոր ուսումնական, և յաչս իմ նախապատիւ հաղարկցս քան ի բարբարոսական մեր Ղազան. այլ եղիցուք հաւատով, զի ամենալաւն է ի ձեռին Աստուծոյ, Զկարգիլ էմի, Հսոյաղինն ստորագիր վերակացու Ղազարեանց Ասիական ուսումնարանին 3000 ռուբլի թողակաւ հանդերձ՝ թող զօթեւան և զկերակուր՝ կարծեմ լինել ձեզ քաջածանօթ յոյժ եւ առանց իմոց ծանօթաբանութեանց, Տես ահա՝ ո՞րպէս լիաձեռն վարձատրեն պատուական տեսարդ զանպիտանս, իսկ Վասն բանագիտաց եւ արժանաւորաց չիք առ դոսա պաշտօն: Ոչ նախանձիմ ընդ շահակէտ վիճակ Հայաստեւ եղբարց, այլ ցաւիմ՝ զի արժանիք մեան անպսակ եւ վատք՝ անհասկանալի իմն բերմամբ կոյր բաղդի, կամ թէ բարեխօսութեամբ հայրենատեաց բարեկամաց յառաջ խաղան: Տէր ընդ նոսա. յուսով եմ՝ թէ ժամանակն բացցէ երբեմն զաչս մերոց ազգասիրաց առ ի տեսանել զանազօտ լոյս ճշմարտութեան և հասուցանել նմա զիրաւն. առ ժամս ուրախանան դասք վատաց և ազգատեցից և տեղի արդարացի՝ սիրաք լաւաց եւ սաղոգ հայրենասիրաց: Զճանապարհորդիլ Խաչատրոյ Ղազարեանց յօտարերկրեայս լուեալ է մեր ի բանից պարոն Դիւլանովին. իսկ զարձակիլ ամբարտաւան Միքայէլ վարդապետի ի հայրենիս իւր ոչ համարիմ կորուստ ինչ վասն ազգիս. գնասցէ՝ ուր աճին պղպեղ եւ քացախ. ճշմարիտ իմաստութեան կից են և ընկեր համեստութիւն բարուց և յարգութիւն առ այլս, բայց սոքա ոչ տեսանին յառնդ յայդմի, քան զնա չիք յաշխարհի իմաս-

տուն եւ բանագէտ. եւ ամենքեան՝ ըստ նորուն մոլար կարծեալ՝ արժանի են արհամարհանաց. ո՞վ սեւացեալ ոգոյն՝ որոյ ծնունդք այնքան դառնացուցիչք խոհականացն բմաց։ Ողջունեսլիք յիմոց դիմաց զնորին վեհափայլութիւն պարոն Խուդարաշեանն (որոյ ընկալեալ յինէն ի պարգեւի մասին զառաջնապտուղ իմոց վաստակոց ի Ղազան՝ մնայ դեռ ինձ պարտական զբաղաբավարութեանն շնորհակալիս) նոյն եւ զփեսայն նորա, զպարոն Սուլտանեանն նոյն եւ զընտանիս Լազարեանց։

Առաքելով ձեզ զփորձ հայկականս տպագրութեան Ղազանու համալսարանի, կամ եւ մնամ միշտ՝ անփոփոխ առ ձեզ սիրով եւ յարգանօք։

Հարազատ Ձեր

Ս. Նազարեան

Յամի 1844. ի նոյեմբ. 2.

ի Ղազան.

Ի 3 փետրվարի 1845 ի Ղազան։

Մեծապատիւ և գիտնական Հօր Եփրեմայ Ասպետ վարդապետի Ս. Նազարեանց խնդաւ։

Զպատուականիդ ընկալեալ զնամակ՝ ընծայեալ ի յունվարի 20, և զառեղեալն ծրար յիսուն արծաթի ռուբլեաց, երազեմ ի պատասխանատրութիւն սիրելոյդ, առ ի միամիտ զձեզ կացուցանելոյ յայսմ մասին և հաղորդելոյ ձեզ ինչ ինչ կարևոր ծանօթաբանութիւնս նկատմամբ առաջի եղեալ գործոյս։ Ըստ ասելոյ ձեր ժողովեալ են արդէն 130 արծաթի ու. յորոց առաքեալ ինձ առ ժամս յիսուն, մնայ դեռ ևս յուղի արկանելոյ զութսուն։ Բարւո՞ք յոյժ առնէիք հաղորդելով ինձ զցուցակ պարգևատուացն՝ առ ի խելամուտ զիս առնել ո՞յր ուրուք որքան առաւանձեռնեալ ի յառաջատուութիւն ազգասիրական մերոյս ձեռնարկի։ Յառաջբան զստանալս զգումարն ամբողջ, յանհնարիցն տեսանի ինձ ձեռն ի գործ փութացուցանել. և ցանկալի էր յոյժ՝ զի որչափ ինչ էր կարողութիւն՝ երազեցուցանել և զյուղարկաւորու-

Թիւն մնացեալ դրամոցն՝ որով մարթացայց և ես յառաջ
խաղալ յիմուամս գործի և արդարացուցանել զոր յիսն են
հաւատք բարեսիրաց ազգիս:

Արդա՛րեւ այսպիսի գեղեցիկ ձեռնտուութեամբ Հայա-
ղանց ի գործ պիտանի՝ պատճառ ընծայի մեզ եղբարփակելոյ՝
եթէ ոչ ամենեցուն սիրտ և հոգի մեռեալ են վասն որոց
լաւքն են և օգտընծայ՝ անտարակոյս, զոր և մտադրեալ է
իմ՝ ի յառաջարանի մերոյս երկասիրութեան գովել և խոս-
տովանիլ ի լուր և ի միտարութիւն, այո՛ և ի խրախոյս
որոց միանգամ են միտք խոկալոյ և սիրտ զգալոյ, եւ զձեր
բարեացապարտ վաստակս յայսմ մասին ոչ թողից առանց
արժանին յիշատակութեան և գովասանութեան, միայն թէ
փութայիք պսակ տալ գեղեցիկ ձերումբ ջանադրութեան: Ի
բանից ձերոց յայանի՝ եթէ գլխաւոր ձեռնտուք գործոյս են
պարօն Լազարեանք՝ յորոց՝ ի լինիլ այսմ՝ ոչ մնայ այլ տե-
ղի վերստին խնդրելոյ զօգնութիւն. յայսմ ոչինչ տարաձայ-
նին կարծիք իմ ի ձերոցն. և մնայ ինձ միայն զայլ ուղի
որոնել և զելս իրացն այլապէս գտանել: Ընկալարո՛ւք առ
ի մէնջ զարժանին շնորհակալութիւն վասն պիտանի ծանօ-
թութեանցդ մեզ հաղորդելոց ի մասին Եպիսկոպոսապետի՝
Ներսիսի և աթոռոյ Հայկական դպրութեան ի Պետերբուրգ:
Եթէ ո՛ր կարծիք են մեր զասացեալ պաշտօնէդ, և ո՞ր է
համարումս հասարակաց զայդմանէ, կարծեմ և ձեզ լինիլ
քաջայայտ: Այդ աստիճան և պաշտօն առանց ուսումնական
ինչ նպատակի կարգեցաւ ի տէրութենէն (որպէս ընթեր-
ցեալ է մեր ի լուրս Սիւնհոգոսի) առ ի պատրաստել ի հայ-
ազն պատանեկաց թարգմանս Հայկականին ի Կովկասեան
գաւառս. ուստի և արտօնութիւն վարժապետին՝ ԼԵՋԱՌՈՆ ասա-
ցելոյ՝ այն է կարդացող, ոչինչ իւրիք համեմատի իմոյն՝ որ
դասէ զիս արդէն ի դասս Պրօֆեսսորաց: Թո՛ղ պարծեսցի ան-
միտդ այդ ստախօս՝ եթէ թողակաւորի 8500 ռուբլեօք՝ մեք
գիտեմք արդէն անձամբ տեղեկութեամբ սահմանելոյն առ
այդ դրամոց՝ որ ոչ առաւելուն բան զ2800 ռուբլիս թուղթ-
որոց ոչ ընթերցան զգրեալսն ի կայսերէ է արդեօք հնար
խաբելոյ զանձինս, բայց մեզ և ձեզ ոչ բնաւ: Զարմանք են
զի Հայք ի մէջ լուսաւորեալ եւրոպացի ազգաց ոչ ամաչին
ի խօսելոյ զայդպիսի սուտ և անհիմն բան, և այդպիսեօք

ջանան փառս և պատիւ անձանց ստանալ: Խաբել զանգէտս հեշտին իմն է, բայց և անարգանք և նախատինք սնապարծ որւոյն:

Մանուկ մեր ութնամեայ արդէն երթալով երթայ և աճէ ի փառս Արարչի իւրոյ և ի մխիթարութիւն ջերմաքերմ զնա սիրող ծնողաց: Յաւէ ինձ՝ զի ցայսօր չեղև հանդիպել առ մեզ Հայոց քահանայի ուրուք առ ի ապլ մանկանս զդրոշմն սուրբ. կարծեմ հաղորդեալ ձեզ արդէն, եթէ առ վտանգի անկնիք կորուսանելոյ զմանուկն, բանադրեալ գտայ ես ի ներկայութեան երկուց վկայից ըստ կարգի բրիստոնէութեան կնքել զմանուկս անձամբ. զայս նախապատիւ ընտրեցի բան... Այս իսկ տարակալութիւն զամենայն Հայոց և ի լուսաւորչադաւան եկեղեցւոյ մի է՝ ի պատճառացն որոց զուգախառնութիւն յաճախակի արդէն յարուցեալ է յիս զցանկութիւն հաստատուն՝ հրաժարել զկնի ամաց ինչ յիմոյս պաշտամանէ և գիմել ի Հայաստանեսոյս Ծնեալ եմք Հայրենեաց. ահա՛ւասիկ վարդապետական սկիզբն իմ. այլք հաճեսցին՝ զմիտս իւրեանց որպէս և կամք են: Բանի՞ երջանիկ լինէր անձն իմ՝ փոխադրեալ երբեմն ի գիրկս Ծերունի հասարակաց մօր մերոյ, Հայաստան ասեմ աշխարհի, և ընդ իմաստուն պաշտպանութեամբ ներսիսի պարապեալ ի գործս բոլորանուէր ազգասիրութեան: Զիք օր մի ի կեանս իմ՝ յորում չեւանել մաղթանք պաղատախառն ի բարձունս Երկնաւորին՝ առ ի ապլ ինձ երբեմն զհնարաւորութիւն կելոյ և մեռանելոյ վասն Հայրենեաց: Ծեր է յոյժ ներսէս, երեկոյացեալ ժամանակն, բայց դեռ հունձք բազումք են առ դուրս: Եւ այս տարակուսելի ինձ տեսանի տակաւին՝ եթէ ունի՞ արդեօք ներսէս գնահատ լինել ուսումնական արանց, կամ եթէ միայն ասիականաւ դեռ վարի չափով կշռողութեան ուսումնական արժանաւորութեան. բազումք՝ որոց կարի յոյժ հաւատացեալ էր նա, խաբեցին զնա անագորոյն եղանակաւ որպէս Զրպեան, Յարութիւն վարդապետ և այլ բազումք յառանին տնտեսութիւնս, գուցէ այս իսկ խտացուցեալ իցէ զսիրտ նորուն և առ արժանաւորս՝ որոց սուրբ և անդրժեյի պարտականութիւն է և եղիցի ոչ չարաչար ի կիր արկանել զնորուն հաւատս և յանձնարարութիւնս Հայաստան բազմաց կարօ-

տի տակաւին առ ի մտանելոյ ի շարս լուսաւորեալ աշխարհաց, և առ այդ պէտք են լուսաւորեալ և շքանկատ գլխոյ, մեծամեծ միջոցաց և գործունեայ արանց: Իմաստակը շատ, փայլունք հազարաւորք՝ երանի՜ զորս ոչ մասնեացէ տէր յորս ատամանց նոցա: Ընդհատելով զլծել բանիցս առ ի ոչ կարի տաղտուկ ի ձեզ արկանելոյ եմ և եղէց առ ի սրտէ բարեմաղթութեամբք առ նորին տարին

Հարազատ բարեկամ ձեր

Ս. Նազարեանց:

ՏԻԻՋԵԱՆՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՈՂԲԱԼԻ ՊԱՏԱՀՄԱՆՅ ՏԻԻՋՕՂԼԵԱՆՅ ՅԵՂԻՆ, ԵՒ ԻՒՐ ՀԵՏԵՒՈՐԴ Ի ՀԱՅՈՑ ՀԵՐՁԵԱԼ ԲՈԼՈՐ ԱԶԳԻՆ ԵՂԵԼՈՅ Ի ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼԻՍ:

Տիւզողեանց ցեղն ի Կոստանդինուպօլիս՝ յաւուրս տաճկաց տէրութեան. հին ցեղ, և յարքունի դրան յազգաց յազգս ծառայողք են. վասնորոյ բազում կերպ ազատութեան ֆերման ի նոյն տէրութենէն շնորհեալ էր ցեղի և հարց սոցա, որք ի վաղ ժամանակաց անուանէին զինքեանս ի հայոց լատինացեալ ըստ դաւանութեան:

Ի մերձ ժամանակս ի սերնդոց սոցա Յովհաննէս Չելչպին էր բազմաց յայտնի, այլ պարկեշտ, խոնարհ, ողորմած, ազգասէր առանց խտրելոյ ընդ հայ և ընդ ֆրանգ անունն. (որ այլոց ի նոյն ազգէ եղելոց յօյժ հարկաւոր, և իբր մասն հաւատոյ համարեալ է խտրել և անուանել զինքեանս ուղղափառ կամ կաթողիկ.) սա. հայն սոյն այս Տիւզեանց բոլոր ցեղին համարեալ թէ միևնոյն թուէր հայ և կաթողիկ անունն: Վասնորոյ 18 ամին, մինչ յօլնք կամէին ի ձեռաց հայոց ազգին մերոյ զսուրբ Յակոբայ վանքն՝ որ յԵրուսաղէմ յափշտա-